ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ՎԱՆԱՁՈՐԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԵԴԱԼԸ

Ապրիլի 26-ի երեկոյան Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին հանձնվեց Վանաձորի Վազգեն Առաջինի անվան կրթահամալիրի «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջին» մեդալը:

Վեհափառ Հայրապետին, որպես կրթօջախի Պատվավոր հոգաբարձուի, կրթահամալիրի առաջին այս մեդալը շնորհվեց դպրոցի կայացման եւ կրտսեր դպրոցի ցածր դասարանների աշակերտների համար կառուցվող մասնաշենքի շինարարության ֆինանսավորման գործում Նորին Սրբության գլխավորությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ունեցած ներդրման համար:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ